

## Կարո Փայլան Գանատա այցելութեան ընթացքին կը հիւրընկալուի Ազգային Առաջնորդարանին, «Հորիզոն»ի խմբագրութեան եւ Ս. Յակոբ Ազգային վարժարանին կողմէ



Թուրքիոյ Խորհրդարանի անդամ եւ Ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան (HDP) պատգամաւոր Կարո Փայլան Հիւսիսային Ամերիկեան իր շրջապայութեան ծիրէն ներս, Մայիս 1-ին ժամանեց Մոնթրէալ: Կարո Փայլան Հայ Դատի Միջազգային Խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեանի եւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ Բաֆֆի Տոնապետեանի ընկերակցութեամբ օդակայան ժամանումէն ետք այցելեց Ազգային Առաջնորդարան, ուր ճաշի հիւրը եղաւ Առաջնորդ Արեազան Բարգէն Արք Չարեանի, որմէ ետք այցելեց «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրատուն եւ Ս. Յակոբ Ազգային վարժարան:

«Հորիզոն»ի խմբագրատան մէջ «Հորիզոն»ի վարիչ խմբագիր Վահագն Գարազեան ամփոփ գիծերու մէջ ներկայացուց «Հորիզոն»ի 38-ամեայ գործունէութիւնը եւ Կարո Փայլանին խմբագրութեան կողմէ նուիրեց Բազէ Հրայրի խաչքարերու նորատիպ հատորը: Կարո Փայլան իր կարգին գնահատեց «Հորիզոն»ի եւ Ափիւնքի Հայ մամուլի առաքելութիւնը: Հանդիպման աւարտին «Հորիզոն» յատուկ հարցազրոյց ունեցաւ Կարո Փայլանի հետ Թուրքիոյ ներկայ քաղաքական իրավիճակին մասին: Հարցազրոյցը կը հրատարակուի յառաջիկայ օրերուն:

Ժամը 2:30-ին փայլան այցելեց Ս. Յակոբ Ազգային վարժարան, ուր մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտները դիմաւորեցին զինք աղ ու հացով, դրօշով եւ հարգանքներով:

Ժամը 2:30-ին փայլան այցելեց Ս. Յակոբ Ազգային վարժարան, ուր մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտները դիմաւորեցին զինք աղ ու հացով, դրօշով եւ հարգանքներով:

ՓԱՅԼԱՆ... Ծար. էջ 13

**2017**  
**HR-V**  
 STARTING FROM  
**\$20,950\***

**HONDA**  
**GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.  
 Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
 www.hondagabriel.com  
 < OPEN SATURDAYS >

**Kevork Asadourian**  
**Vahan Vartanian**

\*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



**ARZ**  
fine foods

the essence of mediterranean gourmet

*Authentic Food Experience*

## ARZ Fine Foods

**You Can Find ARZ Products  
At Selected, Loblaws,  
Superstore, Fortinos,  
Wholesale Club, & Nofrills  
Stores**

- Visit [arzfinefoods.com](http://arzfinefoods.com) for the latest promotions.
- You can also find us on Flipp
- For employment opportunities; Email your resume to [humanresources@arzfinefoods.com](mailto:humanresources@arzfinefoods.com)

# COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



**TRY HEARING AIDS  
RISK-FREE**

**Call 416 754-4327**

699 Coxwell Avenue  
Toronto, ON M4C 3C1  
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road  
#65 Toronto, ON, M1R 4B9  
Tel: 416 754-4327(HEAR)

[www.hearingaidsource.ca](http://www.hearingaidsource.ca)



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection



Images copyright Oticon Canada Ltd.



## hearing aid source

*invisible, custom & comfortable*

# Մուրատ Փափազեան. «Արցախի հարցը այսօր Ֆրանսայի քաղաքական օրակարգին վրայ է» Հարցազրոյց Ֆրանսահայ կազմակերպութիւնները համակարգող խորհուրդի (CCAF) համանախագահ եւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Մուրատ Փափազեանի հետ

Ապրիլ 22-ին «Հորիզոն» խմբագրատունը այցելեց ՀՅԴ Բիւրոյի անդամ եւ Ֆրանսահայ կազմակերպութիւնները համակարգող խորհուրդի (CCAF) համանախագահ Մուրատ Փափազեան, որուն հետ «Հորիզոն» խմբագիր Վահագն Գարագաշեան ունեցաւ ստորեւ ներկայացուած հարցազրոյցը:

Հ.- Այս օրերուն Ֆրանսայի նախագահական ընտրութիւններն են, որոնք երկու հանգրուանով տեղի պիտի ունենան: Հետաքրքրական երեւոյթը այն է, որ բոլոր նախագահական թեկնածուները այսօր կ'արժարձեն հայկական հարցը, Յեղասպանութիւնը եւ մանաւանդ աննախընթացօրէն, առաջին անգամ ըլլալով Արցախի հարցը: Ինչպէ՞ս յաջողեցա՞ք նախագահական թեկնածուներուն պարտադրել, որ անդրադառնան յատկապէս Ղարաբաղի հարցին:

Մ.Փ.- Տասնեակ տարիներու ընթացքին ամէնօրեայ լուրջ աշխատանք տարուած է այս հարցով, եւ մենք, իբրեւ հայ համայնք, կարեւոր ներդրում ունինք Ֆրանսայի քաղաքական կեանքին ներս՝ յարաբերելով տարբեր քաղաքական հոսանքներու հետ, որոնք խորհրդարանին մէջ ներկայութիւն ունին: Քաղաքական մեր քարոզչութիւնն ու աշխատանքը կը կատարենք դիւանագիտական աշխատանքներով եւ զեկոյցներ ներկայացնելով: Ֆրանսահայութիւնը տասնեակ տարիներու ընթացքին սերտ յարաբերութիւններ հաստատած է քաղաքական տարբեր կուսակցութիւններու հետ, յատկապէս վերջին հինգ տարիներուն՝ նախագահ Ֆրանսուա Հոլլանտին հետ, որուն հետ, ինչպէս տեղեակ էք, Դաշնակցութիւնը համագործակցութեան սերտ կապեր ունէր 2000 թուականէն ի վեր: Նշենք, որ Հոլլանտի նախագահական ընտրապայքարին ընթացքին Դաշնակցութիւնը իր գործօն դերակատարութիւնը ունեցաւ, Ֆրանսահայութիւնը մղելով զօրակցելու Հոլլանտին: Պէտք է հաստատել, որ նախագահ Հոլլանտի իր խոստումները յարգեց, յատկապէս Յե-

ղասպանութեան հարցով, նաեւ հարիւրամեակին Հայաստան իր այցելութեամբ: Ամէն տարի Ապրիլ 24-ին ան ներկայ կ'ըլլայ գաղութին մէջ կազմակերպուած նախաձեռնութիւններուն, իսկ երբ Փերինչէքի դատավարութեան առաջին հանգրուանին Փերինչէքը յաղթած էր Զուլեյքերիդի դէմ, մենք դիմեցինք իրեն, ինք ալ անմիջապէս ընդառաջեց, եւ Ֆրանսան, իբրեւ կառավարութիւն, մաս կազմեց դատավարութեան եւ մեր կողքին ունեցաւ դրական կեցուածք:

Արցախի առնչութեամբ, մենք Ֆրանսուա Հոլլանտին հետ 2007-էն ի վեր կ'արժարձենք հարցը: Իրեն յատկացուած ենք, որ Արցախը ոչ միայն Դաշնակցութեան համար, այլ համայն հայ ժողովուրդին համար ռազմավարական նշանակութիւն ունի, ոչ միայն որովհետեւ Արցախը Հայաստանի թիկունքը պաշտպանող պատուարն ու վահանն է, այլ որովհետեւ հոն կայ ժողովուրդ, որ չ'ընդունիր կրկին սպիւր Ատրպէյճանի բռնատիրական լուծին տակ: Հոլլանտի հասկացողութիւնը ցուցաբերեց այս հարցին շուրջ, եւ Միւնստրի խմբակին մէջ, որովհետեւ Ֆրանսա մաս կը կազմէ Միւնստրի խմբակին, միշտ դրական կեցուածք ունեցաւ ի նպաստ հայերուն եւ Արցախին:

Արցախի թեման մենք միշտ կ'արժարձենք Ֆրանսայի մէջ: Խորհրդարանին եւ Մերակոյտին մէջ դասախօսութիւններ կը կազմակերպենք: Այլ առիթով Ֆրանսայի հեռուստատեսայիններէն մէկուն հետ բանավէճի հրաւիրեցինք Ատրպէյճանի դեսպանը: Հայ Դատի յանձնախումբը այն եղբակցութեան յանգեցաւ, որ այսպիսի աշխատանքներ արդիւնք կու տան:

Մէկ խօսքով, մենք մեր յարաբերական լուրջաբան աշխատանքը տարիներէ ի վեր կը կատարենք երեսօտիաներու եւ կառավարական պաշտօնատարներու մօտ, յաճախակի հանդիպումներ կ'ունենանք իրենց հետ: Նկատի պէտք է ունենալ նաեւ, որ Ֆրանսայի մէջ մեր՝ հայերու համարկումը բաւականին յաջող եւ օրինակելի եղած է, այս

մէկը դրական անդրադարձ ունի ֆրանսացիներուն մօտ:

Հ.- Վերջին տասնամեակին մօտաւորապէս եօթը միլիոն բուրժուա-տատուած է եւրոպայի մէջ: Անոնց թիւը Ֆրանսայի մէջ կը տարուբերի 400 հազարէն կէս միլիոնի շուրջ: Անցնող տարիներուն յստակօրէն բացայտուեցաւ Ֆրանսայի բուրժուա-տատու հակահայ գործունէութիւնը: Ֆրանսայի մէջ ինչպէ՞ս կը դիմագրաւէ՞ք այս մարտահրաւերը:

Մ.Փ.- Հակահայ ծրագրուած քարոզչութիւն է իրենց կատարածը, որովհետեւ կը ֆինանսաւորուի թրքական կառավարութեան կողմէ, աւելի ճիշդ՝ ուղղակի էրտողանին կողմէ, եւ նպատակաւորաբար է եւրոպական գաղութներուն մէջ, յատկապէս Ֆրանսայի թուրք գաղութին մէջ կազմակերպել հակահայ նախաձեռնութիւններ: Այսօր Ֆրանսայի մէջ 300 հազար թուրք Ֆրանսացի քաղաքացի ունինք, որոնք թրքական այսօրուան իշխանութեանց կամակատարներն են, եւ իրենց հրահանգներն ու ֆինանսաւորումը կը ստանան ուղղակի Անգարայէն: Այս մէկը վտանգաւոր է. մենք չենք կրնար անտեսել այս վտանգը, բայց կ'ուզեմ շեշտել նաեւ, որ մենք մեր կարգին բաւականին ինքնավստահ ենք, որովհետեւ կը ռազմատած ենք մեր ուժը, մեր կապերն ու մեր քաղաքական կարողութիւնները: Չենք ուզեր թրքագնահատել Ֆրանսայի թուրքերու ապագային յարուցանելիք վտանգը, սակայն մենք գիտակից ենք, որ մշտական պայքար մըն է, զոր պիտի տանինք եւ վստահ ենք, որ միշտ յաղթական դուրս պիտի գանք:

Հ.- Ֆրանսահայ գաղութը համագործակցութեան տեսակետէն մեր իւրապատու կազմակերպութիւններէն մէկն է: Ինչպէ՞ս կը գործէ Ֆրանսայի այն համայնքային մարմինը, որ յաջողապէս կ'իրագործէ Յեղասպանութեան եւ այլ նախաձեռնութիւններու գծով ամբողջական համագործակցութիւնը:



Մ.Փ.- Ֆրանսահայ գաղութը այն գաղութներէն եղած է, ուր ներքին լարուածութիւնները շատ սուր եղած են: Ինչպէս համայն սիւնդիկատային, ֆրանսահայ գաղութը եւս լուրջ պառակտումներ ունեցած է սովետական շրջանին: Հայաստանի անկախութենէն ետք, ֆրանսահայերս որոշեցինք աւելի հեռատես ըլլալ: Հակառակ որ անցեալի սխալները շրջանցելը այդքան ալ դիւրին չեղաւ, սակայն օրակարգի վրայ դրինք գաղութին միասնականութիւնը, իմանալով որ թուրքիան եւրոպայի մէջ կ'արմատանայ եւ Ֆրանսան դարձուցած է թիրախ: Եթէ ժամանակ վատնէինք ներքին մեր հարցերով, հաւանաբար կորսնցնէինք քաղաքական այս պատերազմը: Ուրեմն կամաց-կամաց այդ բոլորը շրջանցելով սկսանք գիտակցել բոլորս ալ, որ կան մեծ ուժեր, որոնք զեկա-վարական դերակատարութիւն պիտի ունենան գաղութին կեանքէն ներս, եւ կան այլ կազմակերպութիւններ, որոնք եւս դերակատարութիւն եւ ներկայութիւն ըլլալու իրաւունքը ունին, հետեւաբար առաջ եկաւ համանախագահութիւն մը՝ CCAF, որուն մէջ 2012-էն ի վեր Արաթորանեանը եւ ես համանախագահ ենք, հակառակ մեր քաղաքական ուղղածութիւններու տարբերութեանց: Մենք պէտք էր մեր ուժերը միացնէինք, որպէսզի կարենայինք դիմագրաւել քաղաքական այս պատերազմը, հետեւաբար մենք բարձր գիտակցութեամբ գացինք այդ քայլին:

Հարցազրոյցը վարեց Վահագն Գարագաշեան

**HAIG AFARIAN**  
Cell : 514.862-6779  
Bur : 514.360.3000 ext 1234  
haig.afarian@gmail.com  
effectuee par MALES ARCHITECTES-HYPOTHECAIRES  
**Charisma FINANCE**  
3310 100e Avenue, bureau 350, Laval  
Quebec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Groupe Sutton - Performer Inc.  
123 Place Frontenac  
Pointe-Claire, QC H9R 4Z7  
**ALBERT ARKILANIAN**  
Courtier immobilier résidentiel  
Residential Real Estate Broker  
aarkilanian@sutton.com  
Cell: 514.962.8822  
Bur: 514.426.9595  
Fax: 514.426.9596

NISSAN | VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS | HONDA  
GABRIEL  
**Kevork Asadourian**  
Directeur des ventes - usagé  
Sales Manager - Pre-Owned  
kasadourian@gabriel.ca  
7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4  
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967  
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

**École De Conduite AZIG**  
Driving School  
Tel: 514-336-1110  
Moniteur-Instructeur  
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM  
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II  
Instruction Automatique ou manuelle

Personal & Corporate Tax Returns  
Financial Statements  
Bookkeeping  
Business Plan  
**NATALIE SKAFF, CPA, CGA**  
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant  
nat.skaff@gmail.com  
Tel. (514) 963 3363  
2866 Rue De Chamonix  
Saint-Laurent, Québec  
H4R 3B7  
Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE  
**NAZARETH CLASSIC GRILL**  
550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6  
Tel: 450.937.4064  
Email: resto.nazareth@hotmail.com

**SAMUEL TOPALIAN**  
450 682-1644  
**AUTO SAMSON**  
MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE  
SERVICE DE PNEUS MISE AU POINT  
4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

ՀԱՅԿ ԳԱՐՊՈՒՆԵԱՆ  
**Hayk Hartounian**  
Courtier immobilier résidentiel  
Residential Real Estate Broker  
C 514.574.6162  
B 514.333.3000

**NETTOYEUR MARIE-CLAIRE**  
CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE  
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)  
2535 de Salaberry, Montréal  
Tél: 514.334.7830

# ՀՅԴ-Ը Կարող է Կառավարութեան Ներսում Գործընթացները Արագացնող Դերակատարութիւն Ունենալ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԴԱԻԻԹ ԼՈՔԵԱՆԻ ՀԵՏ

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ տարածքային կառավարման եւ գարգացման նախարար Դաւիթ Լոճեանի հետ զրուցել է օրերս համայնքների 20 դեկավարների հետ հանդիպման ժամանակ վարչապետի նախանշած համայնքների գարգացման ծրագրերի, ինչպէս նաեւ ՀՀԿ-ՀՅԴ հնարաւոր կոալիցիոն (զինակցութեան-Խմբ.) գործընկերութեան մասին:

**ՎԱՀԱԳՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ.-** Պարոն Լոճեան, ինչո՞վ է պայմանաւորուած վարչապետի այն յայտարարութիւնը, որ երկրի գարգացումն անհնար է, եթէ մարգերը, համայնքները չունենան գարգացման նոր ծրագրեր: Իսկ ի՞նչ եղան համայնքների գարգացման այն ծրագրերը, որոնք ունենին յստակ փինանսաւորում:

**ԴԱԻԻԹ ԼՈՔԵԱՆ.-** Մարզերն ունեցել են սոցիալ-տնտեսական գարգացման ծրագրեր, համայնքներն ունեցել են քառամեայ գարգացման ծրագրեր: Այնտեղ տնտեսական բլոկի հետ կապուած խնդիրները կ'ս' չեն արծարծուած, կ'ս' ընդհանրապէս չատ փոքր ծաւալ են զբաղեցրել, այսինքն՝ աշխատանքներ, որով համայնքն իր ֆունդային բիւջէով, պետութեան օժանդակութեամբ ստեղծուած է աշխատատեղեր: Գաղափարախօսութիւնը դա էր: Սոցիալ-տնտեսական գարգացման ծրագրերը նախկինում գործել են, աւելի շատ ընթացիկ պրոբլեմներն են զբաղեցրել, որոնք եղել են թափառուցուածքային, սոցիալական ոլորտի, այսօր արդէն մարզերի նոր ստեղծած ռազմավարութեան մէջ ընդգծուած է մարզի տնտեսական գարգացումը, տեսլականը, տնտեսական գործունէութիւնը, աշխատատեղերը:

**ՎԱՀԱԳՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ.-** Վարչապետի խօսքով՝ պէտք է ունենալ գարգացման ծրագրեր, որտեղ կը լինեն ոչ միայն մանկապարտէզի, տանիքի, այլեւ գրադուածութեան խնդիրների լուծման, սեփական եկամուտներն աւելացնելու յստակ ծրագրեր: Այդ դէպքում ինչո՞ւ են մենք միշտ գարգացում ասելով՝ նշել, օրինակ, մանկապարտէզների վերանորոգումը կամ կառուցումը:

**ԴԱԻԻԹ ԼՈՔԵԱՆ.-** Գիտէ՞ք ինչ, վարչապետը նկատի ունէր, որ մարզե-

րում, համայնքներում, նոյն երեւան համայնքում այդ տեսլականները պէտք է օգտագործենք օպտիմալ: Հիմա եթէ դուք փորձէք մեր ուսումնասիրութիւնների հետ ծանօթանալ, մենք ուսումնասիրում ենք հանրապետութեան տարածքում մանկապարտէզների խնդիրները, որոնք համայնքային ծառայութիւն են իրենցից ներկայացնում, դուք կը տեսնէք տարազափ տարբեր թուով երեխաներ, տարբեր թուով խմբեր, տարբեր հաստիքակազմ եւ այլն, եւ այլն, այս խնդիրները կանոնադրաբար հարցեր ունենք:

**ՎԱՀԱԳՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ.-** Կարո՞ղ ենք արձանագրել, որ համայնքների գարգացման ծրագրերը մինչ այս արդիւնաւէտ չեն եղել:

**ԴԱԻԻԹ ԼՈՔԵԱՆ.-** Գիտէ՞ք, այդ համայնքային գարգացման ծրագրերն այն մասով, որ կազմուել են, բաւականին էլ արդիւնաւէտ են եղել: Կան համայնքներ, որոնք նախկինում չեն ունեցել համայնքապետարաններ, չեն ունեցել մանկապարտէզներ, չեն ունեցել բուժկէտեր, այսօր ունեն այդ համայնքները: Այսօրուայ դրուած խնդիրներն այլ են, գարգացում ապահովելու գրաւականը՝ աշխատատեղ, զբաղուածութիւն աւելացրած արժէք, համայնքային եկամուտների մեծացում, սա է ամբողջ կոնցեպտը:

**ՎԱՀԱԳՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ.-** Լաւ, անդրադառնալով մի քանի քաղաքական հարցերի: Ի՞նչ փուլում են գտնուում ՀՀԿ-ՀՅԴ կոալիցիոն գործընկերութիւնը շարունակելու մասին քննարկումները:

**ԴԱԻԻԹ ԼՈՔԵԱՆ.-** Տեղեակ չեմ:

**ՎԱՀԱԳՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ.-** Լուրեր շրջանառուեցին այն մասին, որ վարչապետ Կարէն Կարապետեանը չի ցանկանում, որ ՀՀԿն Դաշնակցութեան հետ կոալիցիա կազմի: Ինչո՞ւ:

**ԴԱԻԻԹ ԼՈՔԵԱՆ.-** Ես չեմ կարծում: Դաշնակցութեան նկատմամբ վարչապետն ունի մեծ յարգանք, եւ կարծում եմ, որ ամէն ինչ նորմալ ընթացքի մէջ կը լինի:

**ՎԱՀԱԳՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ.-** Պարոն Լոճեան, ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեանը, անդրադառնալով ՀՀԿ-



ՀՅԴ կոալիցիոն գործընկերութեան անհրաժեշտութեանը, նշել է, որ միշտ կարելի է օրէնքների ընդունման համար արդէն կը պահանջուի պատգամաւորների ընդհանուր թուի 3/5-րդի աջակցութիւնը, իսկ դա նշանակում է առնուազան 60 տոկոս ձայն: ՀՀԿն էլ չի կարողանալու միակակ աջակցում ձայն ապահովել: Միթէ՞ Դաշնակցութիւնը, որն ունի դարի պատմութիւն, այսօր ՀՀԿի որոշումներն ընդունելու համար միջոց է դառնում:

**ԴԱԻԻԹ ԼՈՔԵԱՆ.-** Դաշնակցութիւնը չի կարող միջոց լինել: Գիտէ՞ք, մենք մեր երկրում կառավարման հսկայական փոփոխութիւնների դաշտ ենք մտել, այդ փոփոխութիւնների հիմնական ջատագովը եղել է Դաշնակցութիւնը եւ Դաշնակցութիւնը մասնակցում է պետական կառավարմանը խորհրդարանում եւ կառավարութիւնում, որպէսզի այդ փոփոխութիւնները տանի մեր ցանկալի ուղղութիւններով: Երկրորդը՝ ես կարծում եմ, որ Դաշնակցութիւնը որպէս քաղաքական ուժ իր ամբողջ հզօրութիւններով աշխարհում գործող շատ լուրջ ֆակտոր կարող է դառնալ երկրի ֆորմալ տնտեսական գարգացման, ժողովրդավարութեան տարածման եւ այլ հարցերում: Գիտէ՞ք ինչ, կարելի է հսկա-

ռակ հարցը դնել՝ արդեօք ճիշդ կը լինէր անել սահմանադրական փոփոխութիւններ, դնալ այսպիսի ընտրութիւնների, կառավարման այսպիսի ձեւի եւ կողքի քաշուել՝ չմասնակցել եւ ասել՝ լաւ է չէ այդ ամբողջը: Սրանք են հիմնական մեխանիզմները, եւ յետոյ Դաշնակցութիւնը կարող է նոյն կառավարութեան ներսում շատ կարեւոր ֆունկցիա (դերակատարութիւն-նմբ.) ունենալ, կատարելագործող (արագացնող, ներազդող-նմբ.) ֆունկցիա ունենալ, գործընթացներն արագացնելու, համապատասխան կուլիզաների հետ նորմալ աշխատելու, նորմալ զաղափարներ դնելու:

**ՎԱՀԱԳՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ.-** Իսկ ի՞նչ քննարկումներ են հիմա ընթանում՝ պարտքի մասին (նախարարական պաշտօն-Խմբ.) աւելացման: Զէ՞ որ կայ յստակ ստորագրուած քաղաքական համաձայնագիր, որում ասուում է երկարաժամկետ գործընկերութեան մասին:

**ԴԱԻԻԹ ԼՈՔԵԱՆ.-** Քաղաքական համաձայնագիրը իր մէջ չի ներառում այդպիսի բաներ, այդ մասին ես շատ տեղեկացուած չեմ, քաղաքական մարդկանց հետ քննարկէք այդ հարցերը:

Վարեց՝ ՎԱՀԱԳՆ ՅԱԿՈՒԲԵԱՆ

 **ՅՕՄ-ի Մոնթրէալի Սօսե մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն հինգշաբթի ժամը 12:00-էն 4:00:**

Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:

**«Յայ Յորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝**

<b>Videotron:</b> HD616 կամ SD16	Շաբաթ - 08:30 (առաջին տիտում) եւ 1:30am
<b>Bell Fibe:</b> HD1216 կամ SD216	Կիրակի - 3:30pm
	Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am
	Երեքշաբթի - 12:00pm
	Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm
	Յինգշաբթի - 12:30pm, 12:30am
	Ուրբաթ - 3pm
	Ուղիղ արձակում՝ <a href="http://www.icitelevision.ca">www.icitelevision.ca</a>

 **Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...  
ԼՍԻՊԳՈՅՆ ՍՊՍՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ  
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

**ALINE BEKEREJIAN**  
NOTAIRE • NOTARY

**ՆՈՏԱՐ Այլն Պեթրեճեան**

Achat	Ստեւար	Purchase
Hypothèque	Սնարք Կայրածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կայրածք	Estate
Marriage	Սնուստրիս	Marriage
Procurator	Փոխաւորագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222  
F 514.381.1818

[aline.b@notarius.net](mailto:aline.b@notarius.net)  
[www.abnotaires.com](http://www.abnotaires.com)

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais  
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Փրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

# Սենթ Գաթրինգի մէջ կայացած Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման հանդիսութեան Անդամներու քաղաքապետն ու խորհրդարանի անդամներ

Կազմակերպութեամբ Հայոց Յեղասպանութեան Սենթ Գաթրինգի միացեալ յանձնախումբին եւ համագործակցութեամբ Սենթ Գաթրինգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Պողոս Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիներուն, Կիրակի 23 Ապրիլ, 2017-ին տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 102-րդ Ամեակի պաշտօնական ոգեկոչումը: Յաւարտ Սուրբ եւ Անմահ պատարագի, հարիւրաւոր հայորդիներ հաւաքուեցան Սենթ Գաթրինգի նորակառոյց յուշարձանին առջեւ, ուր ձեռամբ Արժ. Տ. Միւլոն ԲՏՆ. Սարգիսեանի տեղի ունեցաւ հոգիհանգստեան պաշտօն եւ ծաղկեպսակներու զետեղում:



Պաշտօնական հանդիսութեան ներկայ կը գտնուէին Սենթ Գաթրինգի քաղաքապետ՝ Ուալթըր Սենձիք, Դաշնակցային Խորհրդարանի անդամ՝ Քրիս Պիթլ, Նահանգային Խորհրդարանի անդամ եւ Օնթարիոյի նահանգային կառավարութեան ատենախօս՝ Ճիմ Պրատլի, Սենթ Գաթրինգի քաղաքապետական խորհուրդի անդամներ, մշակութային, քաղաքական, ընկերային եւ այլ միութեանց անդամներ, ինչպէս նաեւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող բոլոր միութեանց ներկայացուցիչները:

Յայտագրի հանդիսավար՝ Օրդ. Քարին ՕՏանեանի բացման խօսքէն ետք, ՀՕՄ-ի Շաբաթօրեայ «Յառաջ» Վարժարանի աշակերտները, ընկերակցելով գաղութի երիցագոյն անդամներէն՝ Ընկ. Սեպուհ Թոքաճեանի, միասնաբար վարեցին յաւերժութեան ջահը: Ապա, Սենթ Գաթրինգի տեղական Հայ Դատի յանձնախումբի անունով խօսք առաւ Ընկ. Միսաք Պէլեան: Ան յակիրճ տողե-

րու մէջ փոխանցեց օրուան խորհուրդը եւ յատկապէս ընդգծեց Հայ ժողովուրդի պահանջատէր մնալու անհրաժեշտութիւնը: Ապա, յաջորդաբար խօսք առին քաղաքապետ Սենձիք, եւ երեսփոխան Պիթլ, որոնք նմանապէս անհրաժեշտ նկատեցին նման դէպքերու նշումն ու անոնց նկատմամբ տարուող եւ դեռ տարուելիք հետեւողական աշխատանքներու շարունակութիւնը: Սենձիք եւ Պիթլ միանշանակ դրուատեցին Գանատահայութեան քաղաքական ջանքերը որոնք ի գործ կը դրուին ի խնդիր արդարութեան եւ ցեղասպանութեան ճանաչման:

Պաշտօնատարներու խօսքերէն ետք, յայտագրի հանդիսավարը բեմ հրաւիրեց օրուան բանախօս եւ Հայ Դատի Շրջանային յանձնախումբի անդամ՝ Ընկ. Սիմոն Իգմիրեանը, որ յատկապէս հրաւիրուած էր Թորոնթոյէն: Ընկ. Իգմիրեան իր հակիրճ, սակայն ազդեցիկ բանախօսութեան ընդմէջէն ներկայացուց համառօտ բաղդատական մը Թորոնթոյ վարած մերօրեայ քաղաքականութեան եւ Օսմանեան Կայսրութեան կողմէ որդեգրուած 1915-ի քաղաքականութեան միջեւ: Ան նշեց թէ շատ բան չէ փոխուած եւ թէ հայութիւնն ու հա-

մայն մարդկութիւնը իրաւունք չունին անտարբեր մնալու Հայ դատին նկատմամբ: Եզրափակելով իր խօսքը, Իգմիրեան ընդգծեց, թէ ոգեկոչման ու ճանաչման փուլը աւարտելով, համայն հայութիւնը այսօր պատրաստ է ներկայացնելու իր յստակ պահանջները, որուն արդար նուաճումը կարիքը ունի միասնական եւ աննահանջ աշխատանքի:

Ընկ. Իգմիրեանի խօսքէն ետք, բեմ հրաուիրուեցաւ Արժ. Միւլոն ԲՏՆ. Սարգիսեան, որ իր սրտի խօսքը փոխանցելէ ետք, Պահպանիչով փակեց օրուայ հանդիսութիւնը:

## 180 աշակերտներ եւ ուսուցիչներ կը մասնակցին Քոռնիկ Կեդրոնի «Հայոց ցեղասպանութիւն՝ արդար լուծում» խորագրով ուսանողական խորհրդածողովին



Երեք դպրոցական վարչութիւններէ եւ չորս դպրոցներէ աւելի քան 180 աշակերտներ եւ ուսուցիչներ մասնակցեցան Քոռնիկ Կեդրոնի «Հայոց ցեղասպանութիւն՝ արդար լուծում» խորագրով Օնթարիոյի 2017-ի ուսանողական խորհրդածողովին, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի, 24 Ապրիլ 2017-ին, ցեղասպանութեան ոգեկոչման, դատապարտման ու կանխարգելման ամսուան մէջ եւ Հայոց ցեղասպանութեան յիշատակման պետականօրէն ճանչցուած օրը:

Աշակերտները առիթը ունեցան լսելու Ուորհեսթըր պետական համալսարանի իմաստասիրութեան բաժանմունքի վարիչ եւ դասախօս փրոֆ. Հանրի Ս. Թերիոյին: Անոր մասնագիտութիւնն է ցեղասպանութիւնն ու մարդկային իրա-

ւանց ուսումնասիրութիւնը: Ան ատենապետն է Հայոց ցեղասպանութեան փոխհատուցման ուսումնասիրութեան խումբին: Ուսումնասիրութեան խումբը 2015-ին հրատարակեց «Արդարութեամբ փոխհատուցում՝ Հայոց ցեղասպանութեան համար փոխհատուցումներ» խորագրով իր գեկուցումը:

Փրոֆ. Թերիո իր խօսքին մէջ կեդրոնացաւ արդարութեան գործընթացին հինգ բաղադրիչներուն վրայ (ճանաչում, պատասխանատուութիւն, փոխհատուցում, վերահաստատում եւ վերականգնում) եւ բազմաթիւ օրինակներ ներկայացուց ցեղասպանութեան եւ բռնարարներու տարբեր պարզաներէ:



Ascenseur **Adams** Elevator  
Services Inc.  
PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4  
**RBQ# 1812-6474-22**

**www.adamselevator.ca**

**TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613**

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,  
INSTALLATION OF ELEVATORS.**

**Eddie, Pedro, Joyce Oughourlian**

# Թորոնթոյի մէջ Աշխարհային Հայոց ցեղասպանութեան 102-ամեակը



(Լուսանկարները Իշխան Ղազարեանի)

Թորոնթոյի Հայ համայնքը կիրակի, 23 Ապրիլին հաւաքուեցաւ Հայ համայնքի կեդրոն՝ նշելու համար Հայոց ցեղասպանութեան 102-ամեակը:

Ձեռնարկին կը մասնակցէին կառավարութեան բոլոր ճիւղերէն քաղաքագէտներ, ներառեալ Սաքրպորո-Ակինքուրէն երեսփոխան Առնոլտ Չան եւ Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամական խմբակի ղեկավար, Օնթարիոյի Յառաջդիմական-պահպանողական կուսակցութեան ղեկավար եւ պաշտօնական ընդդիմութեան ղեկավար երեսփոխան Փաթրիք Պրատուն, Ազատական երեսփոխան Մայքըլ Քոթթ, Տոն Վալի Իսթ եւ Սու Ուոլք, Մարիամի քաղաքագետ Ֆրանք Աքարպիթի, Թորոնթոյի քաղաքագետական խորհուրդի անդամ Տոն Իսթ Վալիէն Շելի Գարսի եւ գանատահայութեան երկարատեւ բարեկամ, Աքարպորո-Ակինքուրէն Թորոնթո-

յի քաղաքագետական խորհուրդի անդամ Ճիմ Քարիճիանիս եւ Օնթարիոյի օրէնսդիր մարմնի նախկին երեսփոխան ու նախագահ Տէյվիտ Ուորնըր:

Ձեռնարկին ընթացքին խօսքեր արտասանուեցան դաշնակցային եւ նահանգային կուսակցութիւններու ղեկավարներու, ինչպէս նաեւ խորհրդարանի եւ քաղաքագետական խորհուրդի անդամներու կողմէ:

Գլխաւոր բանախօսն էր Մարդկային Իրաւանց գանատական թանգարանի նախագահ եւ գլխաւոր պատասխանատու դոկտ. Ճոն Եանկ, որ քննարկեց թանգարանի նպատակն ու դերը գանատացիները իրագրել պահելու Հայոց ցեղասպանութեան նման մարդկային իրաւանց ոտնահարումներու վերաբերեալ, ինչպէս նաեւ բոլորին վճարած այն մեծ գինը, երբ աղէտի մը հաւաքական յիշողութիւնը կը կորսուի:

«Մեր հաւաքական յիշողութիւնը հիմնական մէկ մասն է մեր գոյակցութեան, զոր ունիք մեր նախահայրերուն եւ ապագայ սերունդներուն հետ: Եւ միասնաբար յիշելու այս առիթը այդ գոյակցութիւնը կենդանի պահելու միակ միջոցն է»:

Դոկտ. Եանկ իր խօսքը շարունակելով յայտնեց, որ Հայոց ցեղասպանութիւնը մարդկային իրաւանց ներկայ հրատապ հարցերէն մէկն է, մասնաւորաբար որովհետեւ տակաւին այդ բռնարարքին թխտում գոյութիւն ունի:

«Մարդկային իրաւանց մէկ բռնարարքի թխտումը բոլորին թխտումն է: Երբ բռնարարք մը մեր անցեալէն կը ջնջուի, այդ մէկը ուրիշ բռնարարքներ թխտելու եւս կը դիւրացնէ: Ան մէկ այլ պատճառ մը, թէ ինչո՞ւ հրամայական է, որ ոչ միայն Հայ համայնքը յիշէ, այլ բոլոր գանատացիները», եզրափակեց ան:

Յարութ Գասպեան Թորոնթոյի Հայ Դատի յանձնախումբի անունով իր արտասանած բացման խօսքին մէջ յայտնեց, որ թրքական բռնաճնշումներուն եւ Ապրիլի վիճելի սահմանադրական հանրաքուէին մէջ երեւան եկած Թուրքիոյ դէպի մենատիրութիւն ուղուելուն պատճառով Գանատան պէտք է արտասահմանի մէջ իր ժողովրդավարական արժէքները ջատագովէ:

«Առաւել կարեւոր դարձած է, որ ժողովրդավարութեան ղեկավարները ստանձնեն Թուրքիոյ մէջ ճշմարտութիւնը, արդարութիւնն ու մարդկային իրաւունքներու պաշտպանութիւնը», ըսաւ ան:

Ձեռնարկը վերջ գտաւ Հայոց ցեղասպանութեան զոհերուն նուիրուած յուշակոթողին ծաղկեպսակներու եւ ծաղիկներու գետեղմամբ:



Այդ մէկը աշակերտներուն արտօնեց աւելի հաստատ կերպով հասկնալ, թէ արդարութիւնը ի՞նչ կ'ենթադրէ:

Աշակերտները աշխատանոցներուն մասնակցեցան արդարութեան հինգ բաղադրիչ մասերուն հիմամբ, որոնք պատրաստուած էին Քոռնիկ կեդրոնի ուսուցիչներուն կողմէ եւ հիմնուած Հայոց ցեղասպանութեան փոխհատուցման ուսումնասիրութեան վերոնշեալ գեկուցումին վրայ: Աշխատանոցներուն ընթացքին 11-րդ եւ 12-րդ դասարաններու աշակերտները առիթը ունեցան արգարութեան բաղադրիչ իւրաքանչիւր մասին վերաբերեալ շարք մը փաստաթուղթեր ուսումնասիրելու: Աշակերտները իրենց խումբերուն մէջ արտայայտուեցան այն մասին, թէ այդ փաստաթուղթերէն ի՞նչ կը հասկնան: Փաստաթուղ-

թերը առնչուած էին անձնական, հաստատութիւններու եւ փոխհատուցումներու իրաւաբանական, Թուրքիոյ մէջ ընկերային փոփոխութեանց, 1919-ի թրքական ռազմական գաղութարութիւններուն, 1915-1923 թուականներէն հիմնական տեղեկութիւններու:

10-րդ դասարանի աշակերտները մասնակցեցան Գանատայի եւ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ ներկայացման մը, ինչպէս նաեւ առիթը ունեցան Գանատայի 150-ամեակի առթիւ տեսնելու Քոռնիկ կեդրոնի Ճորճթառնի Հայ տղոց մասին ցուցահանդէսը: Բախտը ունեցանք ցուցադրելու նաեւ քանդակագործ Թալին Իսքէճեանի իւրայատուկ գործը՝ «Յոյսի ճամբորդութիւն»ը, որ նուիրուած էր Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին եւ կը ներկայացնէր Հայ ժողովուրդի անցեալն ու

ապագան:

Սրահ վերադառնալէ ետք, կարգ մը աշակերտներ առիթը ունեցան իրենց օրուան վերաբերեալ իրենց մտածումներն ու տպաւորութիւնները փոխանցելու ներկաներուն: Աշակերտները խորհրդաժողովէն ներշնչուած ազդու պատգամներ յղեցին մարդկային իրաւունքները պաշտպանելու եւ ապագայ ցեղասպանութիւնները կանխարգելելու վերաբերեալ: Աշակերտները առիթը ունեցան փրոֆ. Թերիոյին հարցումներ ուղղուելու իրենց աշխատանոցներուն նիւթերուն մասին:

Ներշնչուելով վերջերս հրատարակուած «Տը Փրոմիս» տեսաժապաւէնէն աշակերտները իրենց սեփական խոստումները գետեղեցին #keepthepromise հաշթակին տակ:

Փակման խօսքէն ետք, խորհրդա-

ժողովի մասնակիցները այցելեցին Հայոց ցեղասպանութեան վերածնունդի յուշակոթողը (քանդակագործ Արթուր Չաք-մաքեան) եւ հոն ծաղկեպսակներ գետեղեցին:

Այս առիթով՝ Քոռնիկ կեդրոնի հիմնադիր Ռաֆֆի Սարգիսեան յայտարարեց. «Այս խորհրդաժողովին միջոցով մեր կեդրոնին նպատակն էր աշակերտներուն ուշադրութեան յանձնել ցեղասպանութեան զոհ դարձած խմբաւորումներուն դրական ապագայ մը ապահովելուն եւ միջազգային գետնի վրայ ապագայ բռնարարքներ կանխարգելելուն կարեւորութիւնը: Աւելին, ուզեցինք, որ աշակերտները մտածեն, իրրեւ Գանատայի քաղաքացիներ, իրենց պատասխանատուութիւններուն մասին եւ պատրաստ ըլլան հասարակաց իրաւունքները պաշտպանելու»:

# Կը Պահանջենք Եւ Կ'ուխտենք

23 ապրիլ 2017-ին Մոնթեպելլոյի (Քալիֆորնիա) Հայոց ցեղասպանութեան յուշարձանին մօտ կազմակերպուած էր աւանդական դարձած հսկումի երեկոյ: ՀՅ Դաշնակցութեան շրջանի «Դրօ» կոմիտէութեան կազմակերպած այս ձեռնարկին գլխաւոր բանախօսն էր ՀՅԴ Բիւրոյի անդամ Վիգէն Եագուպեան, որուն խօսքը կու տանք ստորեւ:

**Ես գիտե՛մ: Կարիքը չունիմ ոեւէ մէկու հաստատումին, որպէսզի վաւերացուի այն՝ ինչ որ գիտեմ:**

Մենք գիտե՛նք: Գիտե՛նք, որ մեր մեծ հայրերն ու մայրերը, համակ մեր ժողովուրդը՝ անտէր, անպաշտպան, աքսորուեցան դէպի անապատի անծայրածիր աւազները, որպէսզի հոն, միանալով ոչինչին, ազգովին ոչնչանան նաեւ իրենք, յաւիտեան անհետացնելու համար խորհնացիներու եւ կոմիտասներու հետքերը, որոնք տակաւին երէկ կը լուսաւորէին երկրագունդն ու մարդկային քաղաքակրթութիւնը:

Գիտե՛նք, որովհետեւ մենք ենք այդ ճողոպրած ազգին զաւակները: Մենք է, որ գիտենք ածխացած արմատներէն հանել աւել, սնուցանել սերմեր եւ կերտել համայնք, կերտել ազգ: Մեր Փիւնիկն է սա:

Թող ճանչնան, որ իրենք մարդկայնանան: Թող ճանչնան, որ իրենք քաղաքակրթուին: Թող ճանչնան, որ իրենք ազնուանան: Բայց թող չճանչնան սոսկ այն բանին համար, որ 20-րդ դարու մեծագոյն ոճիրը՝ Հայոց ցեղասպանութեան անժխտելի իրողութիւնը վաւերականութիւն ստանայ: Այդ մէկուն պէտք չունինք մենք, որովհետեւ գիտե՛նք:

Մեզի համար Ցեղասպանութեան ճանաչումը երբեք ինքնանպատակ չէ եղած: Եղած է ճշուն միջոց թուրքիոյ վրայ, որ մեր ազգային պահանջատիրութեան արձագանգը հնչէ անլուրի յանձնառութեամբ, մինչեւ որ մեր ժողովուրդին արդար իրաւունքները ամբողջականորէն վերահաստատուին:

Ռազմավարական այդ ճամբուն վրայ, նոյն տրամաբանութեամբ ալ, առաջնահերթութիւն է այսօր հաստատուած պահանջը իր բոլոր երեսներով՝ տնտեսական, քաղաքական եւ հոգային:

Բնաջնջման նենգ ծրագիրը մատնուեցաւ ճախողութեան շնորհիւ այն հողին, որ սնուցանած էր վերապրողներու հոգիները եւ անոնց ներարկած էր պայքարելու աննկուն ոգին: Հո՛ղն էր, որ իրերայաջորդ սերունդներուն մէջ սահմանեց ազատատենչութեան տեսլականը եւ ազգային ինքնորոշման անսակարկելի եւ անօտարելի պահանջատիրութիւնը:

Հո՛ղն է միայն, որ կրնայ երաշխաւորել ազգի մը գոյութիւնը եւ ըլլալ անոր բնական զարգացման խաբիսը: Այս իմաստով, Հայաստանի Հանրապետութիւնը, որ պէտք է հասկնալ իր ամբողջութեան մէջ, ներառեալ Արցախը, կը հանդիսանայ այն կուռնը, ուրկէ պիտի մղուի Միացեալ, ազատ ու անկախ Հայաստանի մեր պայքարը:

Հայաստանի Հանրապետութեան հոգային ամբողջականութեան պահպանումը ապահով երաշխիքն է մեր գոյութեան: Գաղափարական ու քաղաքական այս հիմնական սկզբունքով է, որ կ'առաջնորդուի ՀՅ Դաշնակցութիւնը:

Անցնող Ապրիլին, երբ ՀՅԴ-ի կամաւորները ճակատ կը փութային, այդ քայլը կը բխէր մեր այս գաղափարական ու քաղաքական սկզբունքներէն: Նոյնն

էր պարագան անցնող զեկտեմբերին, Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան հետ համադրար ստեղծուած պահեստազօրին: Հողը մեր վերապրումի եւ գոյութեան երաշխիքն է եւ անոր կանչը՝ մեր ազգային պահանջատիրութեան մղիչ ուժը:

Ներկայ թուրքիոյ ու յատկապէս բռնազրաւեալ Արեւմտեան Հայաստանի մէջ ապրող հայերը մեր ազգին հարազատ զաւակներն են՝ ի՛նչ լեզու ալ խօսին, ի՛նչ կրօն ալ դաւանին անոնք: Այո՛, անցնող տասնամակներուն յաճախ կրկնած ենք, թէ Եղեռնի հետեւանքով Արեւմտահայաստանի մէջ հայութիւն չմնաց: Կը փորձէինք գէթ այս ձեւով պաշտպանել հոն մնացած, ճողոպրած հայութիւնը, որպէսզի թրքական իշխանութիւնները հաշուեյարդար չտեսնէին անոնց հետ եւս: Սակայն նոյնիսկ 1920-ական եւ 30-ական թուականներուն գիտէինք, թէ հոն կարեւոր թիւով հայութիւն մնացած է: Ժամանակը հասած է, որ մեր ռազմավարական դիտարկումներուն մէջ այս պարագան իր կարեւոր տեղը գտնէ:

Այսօր, համազգային իմաստով, մեր դիմաց ծանացած մարտահրաւէրները չափազանց բարդ են ու բազմաշերտ: Մեր երկրին մէջ ԻՍԿԱԿԱՆ նոր սկիզբի ձեւակերպումէն մինչեւ խարսխուած արգար կարգերու հաստատումը: Յանձնառութիւնը, հաւատքը, ժողովուրդին շահերէն թելադրուած դեկլարումը եւ ներգործօն մասնակցութիւնը կարեւոր հանգամանքներ են այս ճամբուն վրայ: Վերջերս հաստատուած սահմանադրական փոփոխութիւնը կը ստեղծէ օրինական ենթահողը նոր սկիզբի այս ըմբռնումին: Սակայն պէտք է անոր առընթեր տեղի ունենայ նաեւ հոգեփոխութիւն, որ կարելի կը դարձնէ կրաւորականութեան, «սինիսիդ-մի» եւ անձնատուր մտասեւեռումի վանումը մեր ներաշխարհէն, մտածելակերպէն: Այս մէկը կարելի է նուաճել միայն ներհայկական հակադրութիւններու շինիչ ու անկեղծ դրսեւորումով եւ պայքարի նոր որակով, որուն թէ՛ մեկնակէտը եւ թէ՛ վերջնակէտը պէտք է ըլլայ մեր ազգային շահերու սրբազան տեսլականը:

Այս իմաստով ալ, պարարտ է հողը՝ կառուցելու ազգային - գաղափարական ըմբռնումներով առաջնորդուող նոր սկիզբ մը. կառուցելու այն հայոց աշխարհը, ուր ներկայացուած ըլլայ մեր ժողովուրդը՝ իր հարուստ եւ ամբողջական խճանկարով, օժտուած՝ շինիչ ընդդիմութեան ընձեռած կարելիութիւններով:

Յաւօք սրտի, պարարտ է նաեւ հողը անսկզբունք ամբոխավարներուն համար, որոնք պատրաստ են իրենց անհատասիրութեամբ կամ այլ ապագային հաշիւներով շահագործելու մեր ժողովուրդին արդարացի վիշտը եւ անզօրութեան օտարածին զգացումները:

Այս իմաստով պէտք է ըլլալ զգօն: Անհրաժեշտ է նախ՝ մերկացնել այս միտումները, ապա մերժել՝ դատնք, որոնք կը վտանգեն մեր ազգային շահերը: Թարմացնող երեւոյթ էր այս մօտեցումներու կարուկ մերժումը մեր ժողովուրդին կողմէ, ասկէ քանի մը շաբաթ առաջ, երբ ան մերժեց այս պարտուողական վարքագիծը քարոզողները:

Մեր պայքարի ուղեցոյցը մեր գերագոյն նպատակներու իրագործման խնդիրն է: Երբեք պէտք չէ կեղակէտը չեղել այս ուղիէն: Ահա հո՛ս է, որ կ'արժեւորուի եւ այժմէականութիւն կը ստանայ Քրիստափոր Միքայէլեանի «Յարատեւ կռիւ»-ի կոչը:

Հարիւրամեակի օրերէն մինչեւ այսօր թուրքիան

կը փորձէ ուղղակի կամ անուղղակի հարուածներ հասցնել հայութեան եւ Հայաստանին: Ասոր փաստերն են Տէր Զօրի յուշահամալիրի ականահարումը, Հալէպի հայաշատ թաղամասերու եւ ազգային հաստատութիւններու ունեւորումը, Քեսապի տեղահանութիւնը ու վերջապէս՝ ապրիլեան պատերազմը, երբ փորձ եղաւ ճեղքելու հայկական պաշտպանութեան գիծը՝ հասնելու համար Ստեփանակերտ: Սակայն հայկական բանակի մարտունակութեան շնորհիւ կարելի եղաւ խորտակել այս ծրագիրը:

Քրիստափորի «Յարատեւ կռիւ»-ի կոչը, խորքին մէջ, մեր գոյութեան սպառնացող բոլոր վտանգներուն նկատմամբ աշալուրջ ըլլալն է, հսկող պահակը, որովհետեւ մեր ճակատագիրը երբեք չի կրնար կախեալ ըլլալ ուրիշներու գութէն կամ ողորմածութենէն: «Յարատեւ կռիւ»-ը այն շողախն է, որ կանգուն կը պահէ մեր ազգային պահանջատիրութեան գաղափարական պարիսպը: Այսպէս՝ «Նեմեսիս» գործողութիւնը որոշուեցաւ ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովին կողմէ, Երեւանի մէջ, 1919-ին: Արմէն Գարօ նշանակուեցաւ իբրեւ ընդհանուր պատասխանատու այս գործին: «Նեմեսիս»-ի գաղափարական հենքը այն էր, որ անպատիժ պէտք չէ մնան հայութեան դէմ ոճիր գործած պատասխանատու անձերը: Այս մէկը կը բխի համայն հայութեան շահերը պաշտպանելու՝ Դաշնակցութեան սկզբունքային կեցուածքէն:

Կան ինքնապաշտպանութիւնը սքանչելի միասնականութեամբ կազմակերպելու բազմաթիւ օրինակներ եւս, որոնք կը բխին նոյն տրամաբանութենէն: 1895-96-ին, Վանի մէջ: 1915-ին՝ դարձեալ՝ Վանի մէջ: Մուսա Լեռը, Շապին Գարահիսարն ու Ուրֆան: Այս միասնականութեան արդիւնքն էին նաեւ 22 մայիս 1918-ին սկսած Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաբաղի խնդիր (այժմ Վանաձոր) հերոսական կռիւները: «Յարատեւ կռիւ»-ի կոչէն անանած անդրդուելի միասնականութիւն, որ ժողովուրդային ու համազգային գետնի վրայ սքանչելի կերպով արտայայտուեցաւ նաեւ անցնող Ապրիլին, Հայաստանի մէջ:

Գիտե՛նք: Մեր կեանքն ու անցած ուղին այնքա՛ն յստակ ու ջինջ հետք են թողած, որ կարիքը չկայ խաւարած անկիւններ պեղելու, որպէսզի իրականութիւնը յայտնուի: Գիտե՛նք: Լա՛ւ գիտենք:


Մերը պարզապէս պահանջ է: Կը պահանջենք մեր ժողովուրդի բնաջնջուած հատուածին, խոշտանգուած հոգիներու արեան գիւնը, որպէսզի անոնց յաւիտեան նինջը գտնէ իր անդրբը:

Կը պահանջենք մեր հողերը, մեր տունները, մեր եկեղեցիները, որոնք մնացած են անտէր՝ օտարին լուծին տակ:

Մեր հողերը, մեր երգիքները, որոնց հիմերուն մէջ ապաստանած հայու քրտինքն ու արիւնը դարձ էր աւելի վերապրած է՝ իր ճողոպրած զաւակներուն վերամիանալու ցանկութեամբ: Կը պահանջենք ու կը պայքարինք, որ վերականգնուի մեր ազգային արժանապատուութիւնը, վերահաստատուի մեր ամբողջականութիւնը՝ բոլոր մակարդակներու վրայ: Կը պահանջենք եւ կ'ուխտենք:

Կ'ուխտենք յամառօրէն շարունակել տասնամեակներէ ի վեր ծաւալող պայքարը: Այս պայքարը դադրեցնելը համագոր է պարտութեան:

Հետեւաբար, պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր մինչեւ յաղթանակ:



## ՀՈՐԻԶՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ 2017

Միացէ՛ք «Հորիզոն»ի Հայաստան-Արցախ շրջապտոյտին, որպէսզի Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մէջ, Արցախի մեր բոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը

# VILLAGE GREC

CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !



KNOWN FOR THE  
BEST SOUVLAKI  
& GYRO IN TOWN!



4491, boul. Samson, Chomedey, Laval • Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h      Sun. - Wed. 11am - 11pm  
Jeudi à sam. : 11h à minuit      Thurs. - Sat. 11am - midnight



Noor Fine Food™  
Gourmet Mediterranean Cuisine



# صحة و عافية Saha & Afia



1 High Meadow Place, Unit 9, Toronto, Ontario M9L 0A3

Tel 416 745 3111 | Fax 416 745 9337

# ARMENIAN HERITAGE CRUISE®

**JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!**

- St. Kitts • Antigua
- Puerto Rico • Labadee

You must book with TravelGroup in order to attend our private Armenian parties!



INSIDE CABIN	\$1044
PROMENADE INSIDE	\$1094
OCEAN VIEW	\$1234
DELUXE BALCONY	\$1524
SUPERIOR BALCONY	\$1574

SUITES available upon request

3rd or 4th adult or child over 11 years old sharing same cabin \$730  
Children 11 years old and younger \$430

ALL RATES\* are per person, double occupancy. \*Government tax of \$108.36 per person is additional. Prices include all port charges and A/C/A. Registration fee. Deposit of \$250 per person due upon booking. Cruise is fully refundable until June 1, 2017. Rates and information subject to change at any time without notice.

For Reservations Contact:  
Local 561-147-0750  
Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102  
125 SE Mizner Blvd., Suite 14  
Boca Raton, FL 33432  
AHC@travelgroupint.com



SIBIL

HAROUT PAMBOUKJIAN



AKH'TAMAR DANCE ENSEMBLE



Call Arpi Ashkarian (Canada) (519) 748-2672

**CAMP D'ÉTÉ ARARAT**  
ԱՐԱՐԱՏ ՃԱՄԱՐԱՐ

**Յունիս 27-Էն 30 2017**

**«ՓՈՐՁԱՌՈՎԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՐԱԳԻՐ»**

Ճշդուած թիրախ՝  
15 տարեկան պատանիները

**ԱՍԱՌՆԱՅԻՆ «ԱՐԱՐԱՏ» ՃԱՄԱՐԱՐԵՆԵՐՍ**

**ՊՏՈՅՏՆԵՐ**  
Չորեքշաբթի, Յունիս 28, 2017 - Amaze  
Հինգշաբթի, Յունիս 29, 2017 - Cap St-Jacques

Մասնակցութեան սակ՝ **150.00\$**

Մանրամասնութեանց համար այցելել՝

[www.campdetesourphagop.com](http://www.campdetesourphagop.com)

Մտերմ Ծովեր Ենթակցայ Կամպուսի «Արարատ Ճամբար»  
**Camp d'été Ararat**  
Lieu: L'École Arménienne Sourp Hagop, 3400 Rue Nadon, MtL Qc H4J 1P5

Յանվարի 1-նոյեմբերի 31-ը/ Période de pré-inscription: 3 février au 5 mai 2017  
Արևմտա-թեմալ շրջան/ Période d'inscription: 6 mai au 3 août 2017

	Semaine 1 27 au 30 juin	Semaine 2 3 au 7 juillet	Semaine 3 10 au 14 juillet	Semaine 4 17 au 21 juillet	Semaine 5 24 au 28 juillet	Semaine 6 31 juillet au 4 août	Semaine 7 7 au 11 août
Գրանցման սակ/ Frais de participation (110.00\$ de rabais durant la période de pré-inscription)	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$	\$150.00\$
Պայթի/ Activités et Sorties	*Zoo de Granby (M) & Cap St- Jacques (J)	*LaRonde et Action Directe (Me) & Centre de sciences (J)	*MSS (Mo) & Parke Ouverte (M) & Sporting Cage (J)	Plage St Timothée (Ma) & Arbraska et Cache à l'eau (J)	Acrosport Baroni (Mo) & Atrium 1000 (J)	Beach Club (Mo) & SOS Labyrinthe et Boulevard (J)	*LaRonde et Funtopolis (Me) & Arbraska et Château du Cirque (J) & Spectacle Annuel (V)
Բնակարանային սպասարկութիւն/ Service d'autobus	30.00\$ քաղաքային/par semaine						
Ինքնապաշտպանութիւն/ Service de garde	De 16h00 à 18h00: 30.00\$ քաղաքային/par semaine Լինիս 7.00\$ քաղաքային/par jour						

\* Ինքնապաշտպանութիւնը չի կատարուի շաբաթ և հոկտեմբերի 1-ին

Courriel: [camp.ararat@campdetesourphagop.com](mailto:camp.ararat@campdetesourphagop.com)

Siteweb/ COBA: [www.campdetesourphagop.com](http://www.campdetesourphagop.com)

# ANI

Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,  
Thornhill ON L4J 7R5

## LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL



[www.aniristorante.ca](http://www.aniristorante.ca)

Fine Dining  
Catering  
Party Room

**Manoir Gouin**  
Résidence pour aînés autonomes et semi-autonomes

À partir de **995\$** (par semaine)  
Tous les repas, collations et supervision médicale inclus  
**1½ à 4½**

Gicleurs automatiques dans chaque appartement

Մեկ հոս ուրախ եկ  
Պրն. Իրեկան

Պատրաստ է ընդհանուր սոփեստիկ տնային:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6  
514.335.1881 • [www.manoirgouin.com](http://www.manoirgouin.com)

### Camp D'été Ամառնային Ճամբար 2017

- Bricolages
- Ձեռային Աշխատանք
- Natation
- Լողալ
- Sports
- Մարզանք
- Chants
- Երգեր
- Histoires
- Պատմություններ

Juillet/ Յուլիս 3 – 14  
9:00 a.m. - 3:15 p.m.  
Âges/ Տարեկան: 5-14

Pour s'inscrire ou plus d'info:  
Արձանագրութեան համար դիմել՝

(514) 832-0220  
Première Eglise Evangélique Arménienne  
[info@hayavedmontreal.com](mailto:info@hayavedmontreal.com) [www.hayavedmontreal.com/VBS](http://www.hayavedmontreal.com/VBS)

## ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ «Գաղութը ցամքեր է, արդեօք ո՞վ է ցամքեցուցեր»

Մտաւորական ընկերներէս մէկը, որ վերջերս հրատարակային դասախօսութիւն մը կու տար, երկտողով մը ինծի իր հրատարակութիւնը կը յայտնէր ներկաներու փոքր թիւին առնչութեամբ:

«25 տարի առաջ— կը գրէր ան,— նոյն սրահին մէջ 200 հոգի կը հաւաքուէինք: 25 տարուան մէջ, չեմ գիտեր ինչպէ՛ս եղեր է, գաղութը ցամքեր է»:

Ընկերս մատը վէրքին վրայ կը դնէր ու սրտցաւօրէն իր գարմանքը կը յայտնէր:

— «Արդեօք ո՞վ է ցամքեցուցեր»...

Այդ ինչպէ՞ս եղաւ, ի՞նչ եղաւ քառորդ դարու ընթացքին, որ գրական երեկոյ մը այնքան ալ բազմամարդ տեղի չ'ունենար այլեւս, ու կարծես չենք ալ ակնկալեր, որ այդպէս տեղի ունենայ,— բացառութիւնները յարգելի ըլլալով հանդերձ:

Իրապէս տրուելիք հարցումներ են ասոնք, հարցումներ, որ մենք մեզի՛ պէտք է տանք ամենէն առաջ:

Առանց չքմեղանալու որեւէ մտադրութեան, իմ՝ որպէս նման ձեռնարկներու երբեմնի կազմակերպչի կամ ներկայ կազմակերպիչներուն կողմէ, իրեն կրնայի բացատրել ի հարկէ, որ այդ 25 տարի առաջուան ներկաներէն ոմանք, գուցէ շատեր, այլեւս միայն անդիլի աշխարհին մէջ կրնան նման դասախօսութիւններ ունկնդրել, անշուշտ եթէ դասախօսներն ալ իրենց հետ անդրաշխարհի նոյն կողմը գտնուին... Ապա աւելցնել, որ շատեր ալ այլեւս այնքան յօծար չեն զգար օրուան յոգնութենէն ետք տունէն դուրս գալու եւ գրական երեկոյի մը ներկայ գտնուելու, որքան ալ սիրեն կամ սիրած ըլլան նման բաներ:

Վերջապէս, բաղդատամբ այդ տարիներուն, բարեխտաբար կամ դժբախտաբար այնքան են բազում ներկայիս տեղի ունեցող ձեռնարկները, որ մարդիկ շարժուան բոլոր օրերուն յաճախ մէկէ աւելի առիթներ ունին սա կամ նա հայկական ակումբին մէջ մասնակցելու դասախօսութեան մը, ներկայացումի մը, համերգի մը, մանաւանդ ճաշկերոյթի մը, խրախճանքի մը եւ մասամբ նորին: Խօսքս անշուշտ կը վերաբերի քանակին, որակը ուրիշ հարց է, սակայն այդ արդէն այլապէս քննարկուելիք խնդիր է: Կայ նաեւ տեղական այնքան ճոխ մշակութային կեանքը, որմէ գրեթէ կը զրկուինք, երբ ճիգ կ'ընենք միշտ քաջալերելու հայկական ձեռնարկները:

Կրնանք տակաւին թերացումներ փնտռել որակաւոր ձեռնարկներու կազմակերպութեան տեսակէտէն: Ամենէն անորակ ձեռնարկի մը համար անգամ երբ տոմս կը վաճառուի, քարոզչական որոշ աշխատանք կը տարուի՝ տոմսերը սպառելու եւ ձեռնարկը հաստատարներ դարձնելու կամ նուազագոյնը վնասով չեղլիւլու համար, մինչ մուտքը ազատ ձեռնարկի մը համար քարոզչութիւնը կը սահմանափակուի երբեմն միայն առցանց գովազդի կամ հրաւերի մը տարածումով, ինչ որ կրնայ անպայման չհասնիլ բուն հետաքրքրուողներուն: Նոյնիսկ այդ պարագային սակայն հարիւրաւորներ, երբեմն հազարաւորներ իրազեկ կ'ըլլան, բայց եւ այնպէս կ'անտեսեն հրաւերը:

«Ի՞նչ պէտք ունին գալու ու ինծի մտիկ ընելու, այնպէս չէ՞»— կ'եզրակացնէր ընկերս:

Այնպէ՞ս է: Ո՛չ, այնպէս չէ՛:

Ինքզինք հեզնելով կամ նուաստացնելով անգամ համեստօրէն տրուած այդ հարցումին պատասխանը չի՛ կրնար «այո» ըլլալ:

Է՛ր երբեմն, տակաւին պատանի, մենք մեր ծնողներուն ընկերանալով կամ նոյնիսկ անոնցմէ անկախ կը վազէինք ակումբ՝ ունկնդրելու քաղաքս այցելութեան եկած անուանի դէմք մը, գրող մը, մտաւորական մը կամ գործիչ մը: Կը հասկնայի՞նք իրենց իւրաքանչիւր բառը, միտք բանին. վստահաբար ոչ, հաւանաբար կը դառնայինք կը հարցնէինք մեր ծնողներուն կամ վարիչներուն, կամ յետոյ նոյն այդ բանախօսութիւնը կամ դասախօսութիւնը թերթին մէջ կարդալով կը փորձէինք հասկնալ, կը սորվէինք հասկնալ: Նման անձերու հանդէպ այդ յարգանքը մեզի կը ներշնչուէր: Ինչպէս արուեստի, մշակոյթի հանդէպ հետաքրքրութիւնը, նոյնպէս եւ գրականութեան հանդէպ հետաքրքրութիւնը կը մշակուէր մեր մէջ: Տան մէջ, դպրոցը, ակումբը: Մամուլով: Կը դաստիարակուէինք...

Արժէքներու տարբեր համակարգ մը կար:

Դասախօսին անձնական բարեմասնութիւնները՝ հրապոյրը («քարիզման»), պարթեւ հասակը, ճայնին փոքրօրէն ըլլալը կամ խօսելու ճարտարութիւնը չէ, որ մեզ կ'առիւնքնէին, կամ ոչ անպայման միայն ասոնք, այլ ԽՕՄԲԸ, ըսա՛ծը, մտածո՛ւմը: Այո, այդպէս մեծցանք: Այդպէս մեծցողներս էինք, որ 20-ի տեղ 200-ով ներկայ կ'ըլլայինք դասախօսութիւններու: Թե-

րեւս հազարո՛վ նոյնիսկ, երբ Թէօլէօլեաններ, Փոլատեաններ կամ Կապուտիկեաններ բեմ կ'ելլէին:

Կար խօսողը, մտաւորականը յարգելու պատրաստակամութիւն մըն ալ. «սրահը պարապ չըլլա՛յ»— կը մտածէինք:

Կար նաեւ փոխադարձ յարգանքի զգացումը. գաղութի մտաւորականները, կամ ինքզինք մտաւորական համարողները, այլեւ ուսուցիչները, արուեստագէտները, գրող-հրատարակագիր-խմբագիրները հոն կ'ըլլային առաջին կարգերու վրայ:

Աւելցնեմ, որ այսօրուան դժուար վիճակը միայն հայկական երեւոյթ չէ, արժէքներու համակարգի տապալումը ընդհանրացող իրականութիւն մըն է, սակայն պատճառ չէ, որ հաշտուի՞նք անոր հետ:

Այսօր ալ կան լեցուն սրահներ՝ երբ կը խօսուի ինչպէ՛ս աւելի լաւ շահարկումներ ընելու կամ, կալուած մը գնելու պարագային, ինչպէ՛ս չսխալելու եւ նման նիւթերու մասին, բայց ո՛չ՝ նոր գրքի մը, գրական վերլուծումի մը, ընկերային գաղափարականի մը, պատմական երեւոյթի մը եւ այդպիսի բաներու մասին:

Նոյնը չէ՞ պարագան մամուլին, որուն վերլուծական յօդուածները, ազգային հարցերու ներկայացումները կամ գրական էջերը այնքան ընթերցող չունին որքան... նուիրատուութեանց սիւնակները:

Բայց չեմ ուզեր գաւաթին պարապ մասը տեսնել միայն:

Գաղութը չէ՛ ցամքած: Ո՛չ տակաւին: Տակաւին գանգուածները կը շարժին երբ հարցը կը վերաբերի մեր իրաւունքներուն, մեր կրթական հաստատութիւններուն, մեր գոյապահպանման կուռաններուն: Սակայն որպէս-զի չցամքի, մեր ներուժը, մարդկային թէ՛ նիւթական, աւելի ո՛վ պէտք է ուղղորդուի նաեւ դէպի մեր կրթութիւնն ու մշակոյթը, որոնք հիմն իսկ են մեր գոյապահպանման:

Ասոր գիտակցութեամբ պիտի գործեն ղեկավար մարմինները: Անոնք, որոնց պարտականութիւնն է, առաջի՛ն հերթին, ապահովել, որ ցցամքի գաղութը:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

## Արամ Ա. վեհափառին պատկերացումը Սուրիոյ հայութեան վերականգնումի վերաբերեալ

ԱՆԹԻԼԻԿԱՍ – Շաբաթ, 29 Ապրիլ 2017-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, հրաւերով ու նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ միօրեայ համագումար՝ մասնակցութեամբ Սուրիոյ հայութեան հոգեւոր ու համայնքային պատասխանատու մարմիններուն, ինչպէս նաեւ անցնող տարիներուն Սուրիոյ հայութեան օժանդակած կարգ մը կառույցներու ներկայացուցիչներուն:

Համագումարի իր բացման խօսքին մէջ Նորին Սրբութիւնը աւելի լայն ու յստակ կերպով պարզեց իր մօտեցումը վերականգնումի գործընթացքին վերաբերեալ.–

1) Ողջունելով ներկաները, Վեհափառ Հայրապետը առաջին հերթին իր բարձր գնահատանքը յայտնեց բոլոր անոնց, Հայաստանի Պետութենէն սկսեալ մինչեւ Սուրիոյ հայութեան օժանդակութեան գանձանակին մէջ իրենց «այլիլի լուծման» ձգտման հոգեւոր, բարեսիրական ու համայնքային կառույցներն ու բարեբարները, որոնք գործնապէս իրենց մասնակցութիւնը բերած էին Սուրիոյ հայութեան օժանդակութեան աշխատանքներուն: Յիշելով Առաքելային խօսքը՝ «Եթէ մարմինն մէկ անդամը ցաւի՝ բոլոր անդամներն ալ միասին կը ցաւին...» (Ա.Կր 12:26), Նորին Սրբութիւնը կող ուղղեց որ այս գիտակցութեամբ, Սուրիոյ հայութեան տագնապը համահայկական տագնապ նկատելով, շարունակուի մեր զօրակցութիւնը:

2) Ապա, Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ ժամանակը հասած է, որ շտապ օգնութեան հանգրուանէն ընթանանք դէպի վերականգնումի հանգրուան: Երկրէն ներս յայտնուող նշանները որոշ յոյս կը ներշնչեն այս իմաստով. հետեւաբար, վերանորոգ հաւատքով ու յոյսով պէտք է վերականգնումի աշխատանքներուն լծուինք, ըսաւ Նորին Սրբութիւնը, միաժամանակ յիշեցնելով, թէ վերականգնում ըսելով ան չի հասկնար սոսկ քանդուածը վերականգնել կամ վնասուածը վերաշինել. վերականգնում կը նշանակէ էապէս վերարժեւորում մեր ներկայ կեանքին, իր գրական ու բացասական երեսները:

րով, վերակազմակերպում՝ մեր համայնքային կառույցներուն եւ վերանորոգում՝ մեր հաւաքական կեանքին:

3) Վերականգնումը պէտք է ծրագրուի ու կատարուի համապարփակ մօտեցումով. այլ խօսքով, տնտեսական կեանքի վերականգնում, կարիքաւոր ընտանիքներու օգնութիւն, քանդուած տուններու վերաշինութիւն եւ կառույցներու վերաշխուժացում, պէտք է քննարկուին, ծրագրուին ու կեանքի կոչուին մէկ ամբողջութեան ծիրէն ներս, զուգահեռ կերպով եւ առաջնահերթութեան կարգով:

4) Վերականգնումը պէտք է կատարուի հանգրուանային կերպով: Առաջին հերթին, ցանկազրուած պէտք է կատարուի վնասներուն, կարիքներուն եւ ապա՝ անոնց արժեւորումը եւ առաջնահերթութեան ճշդումը: Միշտ հանգրուանային կերպով ու նախապատուութեան կարգով հարկ է կատարուի առաջադրուած ծրագիրներուն իրագործումը:

5) Վերականգնումի նախապատրաստական ծրագիրները անհրաժեշտ է որ կատարուին մասնագիտական, եւ ոչ պարագայական ու հապճեպ մօտեցումով: Այս յոյժ կարեւոր աշխատանքին հարկ է լծել տնտեսական, շինարարական, վարչակազմակերպչական մարզերէն ներս մասնագիտութիւն ու փորձառութիւն ունեցող անձեր:

